



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԱՆՏՈՆՑԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(զանգատ թիվ 3946/05)

ՎՃԻՌ

ՍՏԴԱՍԲՈՒՐԳ

2 հոկտեմբերի 2012թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

02/01/2013

*Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի
համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*



Անտոնյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Ջուսեփ Կասադելայ [Josep Casadevall]՝ *Նախագահ,*

Էլբերտ Մայեր [Egbert Myjer],

Կորնելիու Բիրսան [Corneliu Birsan],

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Լուիս Լոպես Գեռա [Luis López Guerra],

Նոնա Ցոցորիա [Nona Tsotsoria],

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos]՝ *դատավորներ,*

եւ Սանտիագո Քեսադա [Santiago Quesada]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2012 թվականի սեպտեմբերի 11-ին անցկացնելով դռնփակ
խորհրդակցություն, կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է Սարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին՝ կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի տկն Վեներա
Անտոնյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝
2005 թվականի հունվարի 17-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ
3946/05) հիման վրա:

2. Դիմումատուին, որին իրավաբանական օգնություն է տրամադրվել,
ներկայացրել է Ֆրանսիայի Հռենիայմ քաղաքում գործող իրավաբան
տկն Ն. Կարապետյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը
(Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական

դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդել է, որ Հայաստանի իշխանությունները, հրաժարվելով իր մահացած զարմուհու երկու երեխաներին հանել իր բնակարանում հաշվառումից եւ իրենից պահանջելով փոխհատուցում վճարել նրանց, որպեսզի դադարեցվի այդ բնակարանի նկատմամբ նրանց՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը, միջամտել են գույքից անարգել օգտվելու իր իրավունքին, որը երաշխավորված է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով:

4. 2007 թվականի փետրվարի 2-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն: Որոշվել է նաեւ միեւնույն ժամանակ ուսումնասիրել գանգատի ընդունելիության եւ ըստ էության քննության հարցերը (Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Դիմումատուն ծնվել է 1937 թվականին եւ ապրում է Երեւանում: Նա երկրորդ կարգի հաշմանդամ է:

2. Սովետական ժամանակաշրջանում՝ չպարզված օրը, պետությունը դիմումատուին Երեւան քաղաքում վարձակալության իրավունքով բնակարան է հատկացրել:

3. 1981 թվականին դիմումատուի զարմուհին, որը Երեւան էր տեղափոխվել ուսման նպատակով, դիմումատուի համաձայնությամբ հաշվառվել է վերջինիս բնակարանում: 1986 թվականին նա վերադարձել է Հրազդան քաղաք՝ առանց հաշվառումից դուրս գալու: 1989 թվականին դիմումատուի զարմուհին ամուսնացել է եւ համապատասխանաբար 1989 ու 1991 թվականներին ունեցել է

երկու երեխա: Դիմումատուի համաձայնությամբ երեխաները նույնպես հաշվառվել են դիմումատուի բնակարանում, որպեսզի այդ հասցեից բուժօգնություն ստանան:

4. 1993 թվականի փետրվարի 11-ին դիմումատուն բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերել, որը նոտարական կարգով վավերացվել է 1993 թվականի փետրվարի 19-ին:

5. 1996 թվականին դիմումատուի զարմուհին մահացել է: Ուստի դիմումատուի բնակարանում հաշվառումից նա հանվել է:

6. 2003 թվականի դեկտեմբերի 26-ին դիմումատուն դիմել է Երեւանի Քանաքեռ-Զեյթուն շրջանի ոստիկանության բաժանմունք (այսուհետ՝ ոստիկանության տարածքային բաժանմունք)՝ փորձելով երեխաներին հաշվառումից հանել:

7. 2004 թվականի հունվարի 20-ին ուղարկված գրությամբ ոստիկանության տարածքային բաժանմունքը դիմումատուին տեղեկացրել է երեխաներին հաշվառումից հանելու իր մերժման մասին այն հիմքով, որ, ըստ համապատասխան կանոնների, անչափահասներին կարելի է հաշվառումից հանել միայն նրանց ծնողներից մեկին հաշվառումից հանելու դեպքում, ծնողների կամ երեխաների օրինական ներկայացուցիչների դիմումի հիման վրա, ուսման կապակցությամբ կամ դատարանի համապատասխան կարգադրությամբ:

8. Չպարզված օրը դիմումատուն դատարանում վիճարկել է այս մերժումը՝ փորձելով ոստիկանության տարածքային բաժանմունքին պարտավորեցնել երեխաներին հաշվառումից հանել եւ պնդելով, որ վերջիններս նրա բնակարանում երբեք չեն բնակվել:

9. 2004 թվականի մարտի 15-ին Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատարանը մերժել է դիմումատուի բողոքը՝ գտնելով, որ մերժումը եղել է օրինական, քանի որ ոստիկանության տարածքային բաժանմունքը գործել է համաձայն Կառավարության՝ 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 հրամանի: Համաձայն վճռի շարադրանքի՝ կողմերը պատշաճ կերպով ծանուցվել են դատական նիստի մասին, սակայն, նրանք չեն ներկայացել: Ըստ դիմումատուի՝

ինքն այդ նիստի մասին չի ծանուցվել:

10. 2004 թվականի մարտի 25-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել:

11. 2004 թվականի հունիսի 8-ին Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը նույն հիմքով մերժել է դիմումատուի դիմումը: Ըստ այդ վճռի շարադրանքի՝ դիմումատուն եւ նրա ներկայացուցիչը դատական նիստի ժամանակ բանավոր հայտարարություն են արել: Ըստ դիմումատուի՝ ո՛չ իրեն, ո՛չ իր ներկայացուցչին որեւէ բանավոր հայտարարություն անելու հնարավորություն չի տրվել: Պարզվել է նաեւ, որ երեխաների հայրը ներկա է եղել բողոքարկման նիստին եւ դիմումատուի հայցը մերժելու միջնորդություն է ներկայացրել:

12. Չպարզված օրը դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք:

13. 2004 թվականի հուլիսի 23-ին Վճռաբեկ դատարանը մերժել է նրա բողոքը՝ գտնելով, որ.

«Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում այդ իրավունքը կարող է սեփականատիրոջ պահանջով դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից շուկայական գնով փոխհատուցելու միջոցով:

Նման հանգամանքներում վճռաբեկ բողոքում առաջ քաշված փաստարկները հիմնավորված չեն, քանի որ [երեխաների՝] բնակելի տարածության օգտագործման իրավունքը կարող է դադարեցվել միայն համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի»:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. 1982 թվականի Բնակարանային օրենսգիրք (ուժը կորցրել է 2005 թվականի նոյեմբերի 26-ին)

18. Համաձայն 4-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բնակելի տները, ինչպես նաև այլ շինությունների բնակելի տարածությունները կազմում են բնակարանային ֆոնդը:

19. Համաձայն 9-րդ հոդվածի՝ քաղաքացիներն իրավունք ունեն սահմանված կարգով բնակելի տարածություն ստանալու պետական եւ հանրային բնակարանային ֆոնդի տներում:

20. Համաձայն 49-րդ հոդվածի՝ պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի տանը բնակելի տարածություն հատկացնելու վերաբերյալ որոշման հիման վրա համապատասխան գործադիր կոմիտեն քաղաքացուն տալիս է օրդեր, որը հատկացված բնակելի տարածությունն զբաղեցնելու միակ հիմքն է:

21. Համաձայն 51-րդ հոդվածի՝ պետական եւ հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածության վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, բնակելի տարածության օրդերի հիման վրա, վարձատուի՝ բնակարանային-շահագործման կազմակերպության եւ վարձակալի՝ քաղաքացու միջեւ, որի անունով տրված է օրդերը: Պետական եւ հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածություններից օգտվում են բնակելի տարածության վարձակալության պայմանագրին համապատասխան:

22. Համաձայն 53-րդ հոդվածի՝ վարձակալի ընտանիքի այն անդամները, որոնք բնակվում են նրա հետ համատեղ, վարձակալի հետ համահավասար օգտվում են բնակելի տարածության վարձակալության պայմանագրից բխող բոլոր իրավունքներից եւ կրում են բոլոր պարտականությունները:

23. Համաձայն 54-րդ հոդվածի՝ վարձակալի ընտանիքի անդամների թվին են պատկանում վարձակալի ամուսինը, նրանց երեխաները եւ ծնողները: Այլ անձինք

կարող են վարձակալի ընտանիքի անդամներ ճանաչվել, եթե նրանք բնակվում են վարձակալի հետ համատեղ եւ նրա հետ վարում են ընդհանուր տնտեսություն:

24. Համաձայն 55-րդ հոդվածի՝ վարձակալն իրավունք ունի իր հետ բնակվող ընտանիքի անդամների համաձայնությամբ իր զբաղեցրած բնակելի տարածությունում սահմանված կարգով բնակեցնելու իր ամուսնուն, երեխաներին, ծնողներին, ինչպես նաեւ այլ անձանց: Սույն հոդվածին համապատասխան՝ բնակելի տարածությունում բնակեցված անձինք այդ բնակելի տարածությունից օգտվելու իրավունք են ձեռք բերում այնտեղ բնակվող մյուս անձանց հետ համահավասար, եթե բնակեցնելիս այդ քաղաքացիների, վարձակալի եւ նրա հետ բնակվող նրա ընտանիքի անդամների միջեւ այլ համաձայնություն չի եղել:

25. Համաձայն 59-րդ հոդվածի՝ վարձակալի կամ նրա ընտանիքի անդամների ժամանակավոր բացակայության դեպքում նրանց համար բնակելի տարածությունը պահպանվում է մինչեւ վեց ամիս: Սահմանված ժամկետներից ավելի երկար ժամանակահատվածով անձի բացակայության հետեւանքով այդ անձի՝ բնակելի տարածությունից օգտվելու իրավունքը դադարեցվում է դատական կարգով՝ վարձատուի կամ այդ բնակելի տարածությունը մշտապես օգտագործողների կողմից դիմում ներկայացնելով:

Բ. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (գործում է 1999 թվականի հունվարի 1-ից)

26. Համաձայն 23-րդ հոդվածի 2-րդ կետի՝ տասնչորս տարեկան չդարձած անչափահասների կամ խնամակալության տակ գտնվող քաղաքացիների բնակության վայր է համարվում նրանց օրինական ներկայացուցիչների՝ *inter alia* (ի թիվս այլնի), ծնողների բնակության վայրը:

27. Համաձայն 163-րդ հոդվածի 1-ին կետի՝ օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաեւ դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

28. Համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող 225-րդ հոդվածի 1-ին կետի՝ բնակելի տարածության սեփականատիրոջ ընտանիքի անդամները եւ այլ անձինք բնակելի տարածությունն օգտագործելու իրավունք ունեն, եթե այդ իրավունքը գրանցված է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով:

29. Համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող 225-րդ հոդվածի 2-րդ կետի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները եւ դրա դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր համաձայնությամբ: Բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում այդ իրավունքը կարող է սեփականատիրոջ պահանջով դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից շուկայական գնով փոխհատուցելու միջոցով:

30. Համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող 225-րդ հոդվածի 4-րդ կետի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձը ցանկացած անձից՝ ներառյալ սեփականատիրոջից, կարող է պահանջել վերացնելու բնակելի տարածության նկատմամբ իր իրավունքի խախտումները:

Գ. Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի եւ Արհեստակցական միությունների հայկական հանրապետական խորհրդի «Պետական ու հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարանները որպես անձնական սեփականություն քաղաքացիներին վաճառելու մասին» թիվ 272 որոշում (1989 թվականի հունիսի 13)

31. Համաձայն 20-րդ պարբերության՝ պետական ու հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարանները որպես անձնական սեփականություն վաճառվում են տվյալ բնակարանի՝ Բնակարանային օրենսգրքի 54-րդ հոդվածում նշված վարձակալներին եւ նրանց ընտանիքի անդամներին՝ ընտանիքի բոլոր չափահաս անդամների գրավոր համաձայնության դեպքում: Նրանց ցանկության դեպքում բնակարանը կարող է նրանց վաճառվել որպես ընդհանուր սեփականություն:

- Դ. ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» թիվ 821 որոշում (գործում է 1998 թվականի դեկտեմբերի 25-ից)

32. Համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող 20-րդ պարբերության՝ քաղաքացիներին հաշվառելը եւ հաշվառումից հանելն իրականացվում են նրանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաեւ պետության եւ այլ քաղաքացիների նկատմամբ նրանց պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով:

33. Համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող 21-րդ պարբերության՝ քաղաքացիների հաշվառումը կատարվում է ըստ նրանց ժամանակավոր կամ մշտական բնակության վայրի՝ միայն մեկ հասցեով:

34. Համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող 22-րդ պարբերության՝ ժամանակավոր բնակության վայր է համարվում սեփականության, վարձակալության կամ ենթավարձակալության իրավունքով նրան չպատկանող բնակելի տարածությունը, որը քաղաքացու մշտական բնակության վայրը չէ:

35. Համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող 23-րդ պարբերության՝ մշտական բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին բնակվում է մշտապես կամ առավելապես:

36. Համաձայն 29-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ ըստ ժամանակավոր բնակության վայրի հաշվառման վերցվելու մասին դիմումը կարող է մերժվել, եթե, *inter alia*, չկա բնակելի տարածության սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը: Անչափահաս երեխաների հաշվառումը կատարվում է անկախ սեփականատիրոջ գրավոր համաձայնությունից, ծնողներից որեւէ մեկի կամ օրինական ներկայացուցչի հաշվառման վայրում:

37. Համաձայն 39-րդ պարբերության՝ ծնողների հետ համատեղ բնակվող՝ 16 տարին չլրացած անչափահասների հաշվառումը կատարվում է ծնողների անձը հաստատող փաստաթղթերի եւ անչափահասի ծննդյան վկայականի հիման վրա նրանց վերաբերյալ տվյալները տնային գրքում կամ ծնողի հաշվառման քարտում գրառելու միջոցով:

38. Համաձայն 44-րդ պարբերության՝ ըստ ժամանակավոր բնակության վայրի եւ ըստ մշտական բնակության վայրի հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հաշվառումից հանվում են, *inter alia*, բնակության վայրը փոխելու, մահվան կամ հաշվառման հիմք հանդիսացող փաստաթղթերի կամ տեղեկությունների իրականությանը չհամապատասխանելու դեպքում: Հաշվառում կատարող մարմինները եռօրյա ժամկետում փաստաթղթերի հիման վրա քաղաքացուն հանում են ըստ մշտական բնակության վայրի հաշվառումից եւ անձնագրում դրա մասին կատարում համապատասխան նշում:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԳՈՐԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

39. Դատարանը նշում է, որ 2007 թվականի սեպտեմբերի 12-ին եւ հոկտեմբերի 13-ին Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա բողոքի վերաբերյալ իր դիտարկումներում դիմումատուն վկայակոչել է նաեւ Կոնվենցիայի 6-րդ եւ 8-րդ հոդվածներով իրեն տրված իրավունքների ենթադրյալ խախտում:

40. Դատարանի կարծիքով՝ այս նոր բողոքները չեն հավելում դիմումատուի նախնական բողոքները, որոնք ներկայացվել են ավելի քան երկու տարի առաջ Դատարան ներկայացված գանգատի մեջ: Դատարանը, հետեւաբար, կարծում է, որ այս հարցերը սույն համատեքստում դիտարկելն այժմ նպատակահարմար չէ (տե՛ս *Սկուբենկոն ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [*Skubenko v. Ukraine* (dec.)], թիվ 41152/98, 2001 թվականի ապրիլի 6):

II. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

41. Դիմումատուն բողոքել է, որ հրաժարվելով երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանել եւ իրենից պահանջելով փոխհատուցում վճարել նրանց, որպեսզի դադարեցնի իր բնակարանի նկատմամբ նրանց՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը՝ Հայաստանի իշխանությունները միջամտել են գույքից անարգել օգտվելու իր իրավունքին: Այս կապակցությամբ նա վկայակոչում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, որն ունի հետևյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Ընդունելիությունը

42. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն չի սպառել հարցի լուծման՝ իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները: Մասնավորապես, նրանք պնդում են, որ չնայած այն փաստին, որ դիմումատուն վկայակոչում է գույքից անարգել օգտվելու իր իրավունքի ենթադրյալ խախտում, քանի որ իր մահացած զարմուհու երեխաներն իր բնակարանի նկատմամբ ունեցել են բնակելի տարածության օգտագործման իրավունք, ներպետական դատարաններում նրա հարուցած գործերը բացառապես վերաբերել են նրանց հաշվառումից հանելուն: Այնուամենայնիվ, բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագել էր այդ իրավունքի պետական գրանցման պահից՝ համաձայն օրենքով սահմանված կարգի, այլ ոչ թե բնակարանում հաշվառվելու պահից: Բացի այդ, այդ իրավունքը

դադարեցնելու համար միակ իրավասու մարմինը դատարանն էր: Այս մասին իրականում նշվել է Վճռաբեկ դատարանի կողմից իր՝ 2004 թվականի հուլիսի 23-ի որոշման մեջ, որով այն դիմումատուին տեղեկացրել է նրա սեփականության իրավունքի վերականգնման հնարավորության մասին՝ առանձին դատական վարույթ հարուցելու միջոցով: Ուստի դիմումատուն չի օգտվել ներպետական օրենսդրությամբ նախատեսված միակ արդյունավետ պաշտպանության միջոցից, որպեսզի դադարեցնի իր բնակարանի նկատմամբ երեխաների՝ բնակելի տարածության օգտագործման ենթադրյալ իրավունքը: Ավելին, ինչպես առաջարկվել է Վճռաբեկ դատարանի կողմից, դիմումատուն դեռ կարող էր որեւէ դատարան դիմել եւ իր իրավունքները վերականգնել դատական վարույթի միջոցով:

43. Դիմումատուն պնդել է, որ սպառել է ներպետական պաշտպանության բոլոր միջոցները՝ հայց ներկայացնելով պետական պաշտոնյաների անօրինական գործողությունների դեմ:

44. Դատարանը կցանկանար ի սկզբանե նշել, որ այն եզրահանգումը, որ դիմումատուի մահացած զարմուհու երեխաներն ունեն դիմումատուի բնակարանի նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունք, արվել է Վճռաբեկ դատարանի կողմից՝ ուստիկանության տարածքային բաժանմունքի՝ երեխաներին դիմումատուի բնակարանում հաշվառումից հանելու մերժման օրինականության վերաբերյալ վարույթի ժամանակ (տե՛ս վերելում՝ 17-րդ պարբերությունը): Սույն գանգատը Դատարան ներկայացնելիս դիմումատուն իր դժգոհությունն է հայտնել ընդհանուր իրավիճակի կապակցությամբ, որում նա հայտնվել էր, մասնավորապես, իշխանությունների՝ երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանելու մերժումը եւ դրա հետ միասին նրանց կողմից ներկայացված պահանջն առ այն, որ նա երեխաներին փոխհատուցում վճարի իր բնակարանի նկատմամբ նրանց՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցնելու համար: Ուստի, հակառակ Կառավարության պնդմանը, դիմումատուն բողոքել է իր գույքից անարգել օգտվելու իրավունքի ոտնահարման կապակցությամբ ոչ թե այն պատճառով, որ իր մահացած զարմուհու երեխաներն

օգտվել են իր բնակարանի նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունքից, այլ այն համատեքստում եւ այն պատճառով, որ իշխանությունները հրաժարվել են երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանել:

45. Այդուհանդերձ, Դատարանը նաեւ կարծում է, որ Կառավարության այն պնդումը, թե բոլոր միջոցները չեն սպառվել, սերտորեն կապված է սույն բողոքի էության հետ եւ հետեւաբար պետք է միացվի գործի ըստ էության քննությանը:

46. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Արդյո՞ք տեղի է ունեցել դիմումատուի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի իրականացմանը միջամտություն

ա) Կողմերի փաստարկները

47. Դիմումատուն պնդել է, որ իր գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտություն է կատարվել: Մասնավորապես, նա չի կարողացել իր բնակարանը վարձակալության հանձնել, քանի որ երեխաներն այնտեղ են եղել հաշվառված:

48. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի՝ գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտություն չի կատարվել, քանի որ դիմումատուի կողմից հարուցված վարույթը բացառապես վերաբերել է երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանելուն: Այս առումով Կառավարությունը կրկին նշել է, որ համաձայն Հայաստանի օրենսդրության՝ ոստիկանության անձնագրային բաժնի կողմից անձին որեւէ բնակարանում հաշվառելն իրավական հիմք չէ այդ բնակարանի նկատմամբ որեւէ սեփականության իրավունք սահմանելու համար: Մասնավորապես, ոստիկանությունում հաշվառելը ոչ այլ ինչ է, քան մշտական, ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրի մասին տվյալների համակարգ,

որը պահվում է քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների արդյունավետ իրականացման, ինչպես, օրինակ, ընտրություններում քվեարկելու կամ դատարանից ծանուցագիր ստանալու համար: Ինչ վերաբերում է բնակելի տարածության օգտագործման իրավունքին, այդ իրավունքը ծագել է միայն դրա պետական գրանցման պահից՝ օրենքով սահմանված կարգով: Բացի այդ, դիմումատուի այն պնդումը, թե ինքը հնարավորություն չի ունեցել իր բնակարանը վարձակալության հանձնելու, անհիմն է, քանի որ գործում ոչ մի ապացույց չկար, որը կվկայեր այն մասին, որ նա երբեւիցե *de jure* (դե յուրե) կամ *de facto* (դե ֆակտո) զրկվել է այդպես գործելու հնարավորությունից:

բ) Դատարանի գնահատականը

49. Դատարանը կրկին նշել է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիմնական նպատակն է անձին պաշտպանել իր գույքից անարգել օգտվելու հարցում պետության կողմից անհիմն միջամտությունից: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի 1-ին հոդվածի ուժով յուրաքանչյուր պայմանավորվող կողմ «[իր] իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում [է] այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն [Կոնվենցիայում]»: Այս ընդհանուր պարտականության կատարումը կարող է առաջացնել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների արդյունավետ կատարումն ապահովելուց բխող դրական պարտավորություններ: Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում այդ դրական պարտավորություններով պետությունից կարող են պահանջվել ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ գույքի նկատմամբ իրավունքը պաշտպանելու համար (տե՛ս *Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [*Broniowski v. Poland* [GC]], թիվ 31443/96, § 143, ՄԻԵԴ 2004-V):

50. Սույն գործում դիմումատուն բողոքել է, որ Հայաստանի իշխանությունները, հրաժարվելով իր մահացած զարմուհու երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանել եւ իրենից պահանջելով փոխհատուցում

վճարել նրանց իր բնակարանի նկատմամբ նրանց՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցնելու համար, միջամտել են իր գույքից անարգել օգտվելու իրավունքին: Ուստի Դատարանը համարում է, որ սույն գործը վերաբերում է մի վեճի, որը գտնվում է ոչ թե մասնավոր իրավունքի, այլ հանրային իրավունքի գործողության ոլորտում եւ վարչական հայեցողության շրջանակներում: Այս իմաստով հնարավոր միջամտության հարցը սերտորեն կապված է բողոքի հետագա ըստ էության քննության հետ: Հետեւաբար Դատարանը պետք է ամբողջությամբ ուսումնասիրի դիմումատուի բողոքն այն մասին, որ երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանելու անհնարինության պատճառով խախտվել է գույքից անարգել օգտվելու իր իրավունքը:

51. Ինչ վերաբերում է միջամտության բնույթին, Դատարանը նշում է, որ սույն գործում տեղ չի գտել գույքից զրկելը: Ավելին, դիմումատուի բնակարանում երեխաների հաշվառված մնալը *de jure* համարժեք չի եղել գույքի օգտագործումը հսկելուն, քանի որ Հայաստանի օրենսդրությամբ այս առումով դիմումատուի սեփականության իրավունքի որեւէ սահմանափակում չի նախատեսվել: Պետք է նշել, որ դիմումատուն որեւէ ապացույց չի ներկայացրել ի հավաստումն իր այն պնդման, որ նա հնարավորություն չի ունեցել իր բնակարանը վարձակալության հանձնելու: Մյուս կողմից, կարող է համարվել, որ դիմումատուի կամքին հակառակ իր բնակարանում երեխաների հաշվառված մնալը դիմումատուին՝ որպես բնակարանի սեփականատիրոջ, էական անհարմարություն է պատճառել եւ հետեւաբար ինքնին պահանջում է պաշտպանություն Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն: Ավելին, երեխաների հաշվառված մնալը կարող է համարվել դիմումատուին՝ իր բնակարանը մեկ այլ անձի վաճառելու իրական հնարավորությունից *de facto* զրկում: Նման հանգամանքներում Դատարանը գտնում է, որ դիմումատուի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի ենթադրյալ խախտումը պետք է դիտարկվի սույն հոդվածի առաջին կետի առաջին նախադասության, մասնավորապես՝ գույքից անարգել օգտվելու շրջանակներում:

2. *Արդյո՞ք միջամտությունը հիմնավորված էր*

ա) **Օրինականությունը**

52. Դիմումատուն նշել է, որ երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանելու մերժումն անօրինական է եղել, քանի որ Կառավարության թիվ 821 որոշումը չէր նախատեսում հաշվառումից հանելը մերժելու այդպիսի հիմքեր: Նմանապես, Վճռաբեկ դատարանի այն եզրահանգումները, որ երեխաները բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեն, եւ որ այդ իրավունքը դադարեցնելու համար դիմումատուն պետք է նրանց փոխհատուցում վճարի, անհիմն են, քանի որ դրանք հակասում են Բնակարանային օրենսգրքի 54-րդ եւ 59-րդ հոդվածներին եւ Կառավարության վերոնշյալ որոշմանը:

53. Կառավարությունն այս առումով որեւէ փաստարկ չի ներկայացրել:

54. Դատարանը կրկին նշում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին եւ ամենակարեւոր պահանջն այն է, որ հանրային իշխանության կողմից գույքից անարգել օգտվելու ցանկացած միջամտություն պետք է օրինական լինի (տե՛ս *Բատրիդիսն ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [*Iatridis v. Greece* [GC]], թիվ 31107/96, § 58, ՄԻԵԴ 1999-II): Սակայն իրավական հիմքի առկայությունն ինքնին բավական չէ օրինականության սկզբունքը բավարարելու համար, ինչը նաեւ ենթադրում է, որ ներպետական օրենսդրության կիրառելի դրույթներն իրենց կիրառության մեջ բավականաչափ հասանելի, ճշգրիտ եւ կանխատեսելի են: Այդ սկզբունքով նաեւ պահանջվում է, որ Դատարանը ստուգի, թե արդյոք ազգային դատարանների կողմից ներպետական օրենսդրության մեկնաբանությունը եւ կիրառումը հանգեցնում է այնպիսի հետեւանքների, որոնք համապատասխանում են Կոնվենցիայի սկզբունքներին (տե՛ս, օրինակ՝ *Ապոստոլիդիսն եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*Apostolidi and Others v. Turkey*], թիվ 45628/99, § 70, 2007 թվականի մարտի 27):

55. Սույն գործում ոստիկանության տարածքային բաժանմունքի կողմից դիմումատուին ուղարկված գրության մեջ երեխաներին հաշվառումից հանելու մերժման համար որեւէ իրավական հիմք չէր նշվում, այլ պարզապես նշում էր, որ «համաձայն համապատասխան կանոնների՝ անչափահասներին կարելի է

հաշվառումից հանել միայն նրանց ծնողներից մեկին հաշվառումից հանելու դեպքում, ծնողների կամ երեխաների օրինական ներկայացուցիչների դիմումի հիման վրա, ուսման կապակցությամբ, կամ դատարանի համապատասխան կարգադրությամբ» (տե՛ս վերելում՝ 11-րդ պարբերությունը): Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատարանը եւ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը ուստիկանության տարածքային բաժանմունքի դեմ դիմումատուի հայցը մերժելիս գտել են, որ ուստիկանության տարածքային բաժանմունքի մերժումն օրինական է, քանի որ հիմնված է Կառավարության թիվ 821 որոշման վրա (տե՛ս վերելում՝ 13-րդ եւ 15-րդ պարբերությունները): Վճռաբեկ դատարանն իր հերթին, ինչպես արդեն վերը նշվել է, գտել է, որ օրենքի կիրառելիության մասով դիմումատուի բողոքը հիմնավորված չէ, քանի որ երեխաները դիմումատուի բնակարանի նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեն, եւ դիմումատուն կարող էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն հայց ներկայացնել բնակելի տարածության օգտագործման նրանց իրավունքը դադարեցնելու համար՝ փոխհատուցում վճարելով նրանց:

56. Դատարանը նշում է, որ ուստիկանության դեմ դիմումատուի հայցը մերժելիս ազգային դատարանների կողմից վերոնշյալ որոշման ոչ մի կոնկրետ դրույթ չի մատնանշվել: Փոխարենը, մերժումն օրինական համարելու համար ազգային դատարանները ընդհանուր հղում են կատարել վերոնշյալ որոշմանը: Այս կապակցությամբ Դատարանը կցանկանար մատնանշել, որ Կառավարության թիվ 821 որոշումը 2004 թվականի հունվարի 20-ի գրության մեջ նշված հիմքերով անձի բնակարանում երեխաներին հաշվառումից հանելն ակնհայտորեն արգելող որեւէ դրույթ չի պարունակում:

57. Բացի այդ, օրենքի կիրառելիության մասով դիմումատուի բողոքը մերժելիս Վճռաբեկ դատարանն իր հերթին որեւէ հիմնավորում չի ներկայացրել դիմումատուի բնակարանի նկատմամբ երեխաների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի առկայության մասով իր դիրքորոշման կապակցությամբ: Դատարանը նշում է, որ Հայաստանի օրենսդրությունը

բնակության վայրում անձի հաշվառումը չի կապել եւ չի կապում տվյալ անձի՝ այդ բնակության վայրի նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունքի սահմանման հետ: Կառավարությունն իրականում պնդել է սա իր դիտարկումներում: Մասնավորապես, համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասի, բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում է միայն սեփականատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրով (տե՛ս վերելում՝ 28-րդ եւ 29-րդ պարբերությունները): Սույն գործում դիմումատուի եւ երեխաների միջեւ նման պայմանագիր կնքված չի եղել: Ավելին, նախքան Քաղաքացիական օրենսգիրքը 1999 թվականին ուժի մեջ մտնելը, Բնակարանային օրենսգրքի 55-րդ հոդվածով նախատեսված կարգով բնակելի տարածության օգտագործման իրավունքը տրվում էր տվյալ բնակարանում բնակվելու փաստի ուժով: Սակայն ինչպես հաստատվել է սույն գործում, երեխաները դիմումատուի բնակարանում երբեք չեն բնակվել: Ուստի չի կարելի ենթադրել նաեւ, որ Բնակարանային օրենսգրքի ուժով երեխաներն ունեցել են բնակելի տարածության օգտագործման իրավունք:

58. Հետեւաբար կարելի է եզրակացնել, որ թե՛ երեխաներին դիմումատուի բնակարանում հաշվառումից հանելու վերաբերյալ ոստիկանության մերժումը, թե՛ նրանց փոխհատուցում վճարելու պահանջը տվյալ բնակարանի նկատմամբ նրանց՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցնելու նպատակով, հստակ իրավական հիմնավորում չունեն: Նման եզրակացության հանգեցնել՝ Դատարանը համապատասխանաբար գտնում է, որ դիմումատուն պարտավոր չէր 225-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն առանձին հայց ներկայացնել փոխհատուցում վճարելու միջոցով երեխաների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցնելու համար: Ուստի պաշտպանության բոլոր միջոցները չսպառելու մասին Կառավարության համապատասխան առարկությունը պետք է մերժվի:

59. Ընդհանուր առմամբ Դատարանը կցանկանար առանձին մատնանշել, որ չնայած նշվել է, որ անչափահասներին կարելի է հաշվառումից հանել միայն նրանց ծնողներից մեկին հաշվառումից հանելու դեպքում, ո՛չ ոստիկանության

տարածքային բաժանմունքը, ո՛չ էլ ազգային դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ, փաստորեն, դեռևս 1996 թվականին երեխաները դիմումատուի բնակարանում հաշվառումից չէին հանվել իրենց մորը հաշվառումից հանելու ժամանակ, մինչդեռ երեխաներն իրենց հոր հետ բնակվել են վերջինիս բնակության վայրում՝ այլ քաղաքում:

60. Վերոնշյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ այն ձեւը, որով Հայաստանի իշխանությունները մերժել են երեխաներին դիմումատուի բնակարանում հաշվառումից հանել, այն է՝ ընդհանուր հղում կատարելով Կառավարության թիվ 821 որոշմանը եւ պահանջելով, որ փոխհատուցում վճարվի նրանց իր բնակարանի նկատմամբ բնակելի տարածության օգտագործման նրանց ենթադրյալ իրավունքը դադարեցնելու համար, հանգեցրել է ներպետական օրենսդրության անկանխատեսելի կիրառման եւ հետեւաբար չի համապատասխանում օրինականության եւ իրավունքի գերակայության սկզբունքին: Հետեւաբար դիմումատուի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտելն օրենքով նախատեսված չի եղել:

61. Համապատասխանաբար խախտվել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը:

III. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 6-ԸՆԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

62. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիման վրա՝ դիմումատուն բողոքել է, որ դատաքննությունն անարդար է եղել, քանի որ իրեն չեն ծանուցել Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատարանում նիստի մասին, եւ իրեն Վերաքննիչ դատարանում բանավոր հայտարարություն անելու հնարավորություն չի տրվել:

63. Հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը, եւ այնքանով, որքանով այս բողոքը գտնվում է իր իրավագործության ներքո՝ Դատարանը գտնում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների եւ ազատությունների

խախտման որեւէ հատկանիշ: Այստեղից հետեւում է, որ գանգատի այս մասը պետք է մերժվի ակնհայտ անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

64. Դիմումատուն պահանջել է 8 060 եվրո այն նյութական վնասի համար, որը նա հաշվարկել է բնակարանը վարձակալության տալու հետ կապված բաց թողնված օգուտների հիմա վրա: Նա նաեւ պահանջել է 100 000 եվրո՝ իր առողջական վատ վիճակի վերականգնման համար անհրաժեշտ ոչ նյութական վնասի համար: Այս կապակցությամբ նա պնդել է, որ իր իրավունքների խախտման հետ կապված տառապանքների եւ սթրեսի արդյունքում հիվանդություն է ձեռք բերել:

65. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի՝ նյութական վնասի հետ կապված պահանջը պետք է մերժվի, քանի որ նրա իրավունքների ոչ մի խախտում տեղի չի ունեցել, եւ նա *n'չ de jure, n'չ էլ de facto չի* գրկվել իր բնակարանը վարձակալության հանձնելու հնարավորությունից, եւ ենթադրյալ խախտման եւ պահանջված նյութական վնասի միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ չկա: Նույն չափանիշները պետք է կիրառվեն նաեւ ոչ նյութական վնասի կապակցությամբ, քանի որ դա պահանջելով՝ դիմումատուն փաստորեն

փոխհատուցում էր հայցում բուժման համար, որը, ըստ էության, համարվում է դրամական վնաս: Ավելին, դիմումատուն որեւէ ապացույց չի ներկայացրել ի հավաստումն իր այն պնդման, որ իր առողջական խնդիրները կապված են եղել Կոնվենցիայով իրեն վերապահված իրավունքների ենթադրյալ խախտման հետ: Ամեն դեպքում, նա որեւէ փաստաթղթային ապացույց չի ներկայացրել պահանջվող ոչ նյութական վնասի չափը հիմնավորելու համար:

66. Դատարանը նշում է, որ գործի նյութերում ոչինչ չի վկայում այն մասին, որ դիմումատուն իր բնակարանը չէր կարող վարձակալության հանձնել երեխաների՝ այնտեղ հաշվառված լինելու պատճառով: Ուստի հայտնաբերված խախտման եւ դիմումատուի նշած բաց թողնված օգուտի միջեւ պատճառահետեւանքային կապ չկա: Հետեւաբար դիմումատուի նյութական վնասի հատուցման պահանջը պետք է մերժվի: Միեւնոյն ժամանակ Դատարանը գտնում է, որ իր զարմիկներին իր բնակարանում հաշվառումից հանելու անհնարինության պատճառով դիմումատուն կրել է ոչ նյութական վնաս: Արդարության սկզբունքի հիման վրա վճիռ կայացնելով՝ այդ կապակցությամբ Դատարանը դիմումատուին շնորհում է 3 000 եվրո:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

67. Դիմումատուն պահանջել է ընդհանուր 1 111 եվրո՝ ծախսերի եւ ծախքերի համար, այդ թվում՝ 522 եվրո՝ ներպետական վարույթում կրած իրավական, նոտարական եւ դատարանի տուրքի, ինչպես նաեւ փոխադրման ծախսերի եւ տարբեր վարչարարական ծախսերի, ինչպես օրինակ՝ փոստային ծառայության, տպագրման եւ պատճենահանման ծախսերի համար, եւ 589 եվրո՝ Դատարանում կրած իրավական եւ նոտարական տուրքերի, ինչպես նաեւ փոստային ծառայության եւ թարգմանչական ծախսերի համար:

68. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն որեւէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ նա այդ ծախսերն իրականում կրել է: Բացի այդ, ինչ վերաբերում է օրինական ներկայացուցչին տրամադրված վճարներին եւ

դիմումը Դատարան ներկայացնելու հետ կապված ծախսերին, դիմումատուն չի ապացուցել, որ դրանք եղել են անհրաժեշտ եւ ողջամիտ:

69. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման իրավունք այնքանով, որքանով հաստատվել է, որ նա դրանք իրականում եւ անհրաժեշտաբար կրել է, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Այս առնչությամբ Դատարանը նշում է, որ դիմումատուն չի ներկայացրել որեւէ փաստաթղթային ապացույց՝ ներպետական դատարաններում կրած ծախսերի եւ ծախքերի առումով իր պահանջները հիմնավորելու համար: Ամեն դեպքում դիմումատուին իրավաբանական օգնություն է ցուցաբերվել Դատարանի կողմից: Հետեւաբար Դատարանը որոշում է այս մասով դիմումատուին որեւէ հատուցում չտրամադրել:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

70. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Որոշում է* Կառավարության՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ առարկությունը միացնել գործի ըստ էության քննությանը եւ *մերժում է* այն.

2. *Հայտարարում է* դիմումատուի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտության վերաբերյալ բողոքն ընդունելի, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի.

3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.

4. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է որպես ոչ նյութական վնասի հատուցում դիմումատուին վճարի 3 000 եվրո (երեք հազար եվրո) գումար՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2012 թվականի հոկտեմբերի 2-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Սանտիագո Քեսադա
Քարտուղար

Ջուսեփ Կասադեյա
Նախագահ